

ԱՂՕԹՔ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Կիրակի 16 Փետրուար, 2014-ին, կէսօրէ ետք ժամը՝ 4:00-ին, Հայ երեք Համայնքապետերու նախագահութեամբ տեղի ունեցաւ Աղօթք եկեղեցիներու Միութեան համար, Հայ Աւետ. Բեթել Եկեղեցիին մէջ: Պաշտամունքի առաջնորդութիւնը կատարեց Վեր. Սերոբ Մկրտիչեան՝ 122.1-9 սաղմոսի ընթերցումով: Աղօթքի միաբանութեան պաշտամունքը կ'ընդգրկէր երկու բաժիններ՝ Երեկոյեան ժամերգութիւն, եկեղեցիներու Միութեան համար աղերսանք: Այս տարուան բնաբան համարը հիմնուած էր՝ (Ա. Կորնթ. 1:1-13): Ապա Հայ երեք Համայնքապետեր՝ Վերապատուելի Յարութիւն Սելիմեան, Արիիապատի՝ Տէր Պետրոս Արք. Միրիաթեան եւ Գերաշնորհ՝ Տէր Շահան Ս. Եպիսկոպոս Սարգիսեան մատուցին պատգամ այս առթիւ: Պաշտամունքը վերջ գտաւ Հայ Երեք Համայնքապետերու առաքելական օրհնութեան աղօթքով:

